# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

№ 5539-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՅԴ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով հաստատված փրկարարական ծառայության կանոնագրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում օպերատիվ հերթապահության մեջ ներգրավված ստորաբաժանումների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում օպերատիվ հերթապահության մեջ ներգրավված ստորաբաժանումների գործառույթները՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ, փրկարարական ծառայության գեներալ-մայոր Կ. Ցուցուլյանին:

3. Հրամանը ծանոթացնել իրավասու ծառայողներին և աշխատողներին:

25/09/2024

X

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN VAHE 2514740053

**Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի
2024 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 5539 հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1. Երևան քաղաքի փրկարարական վարչության՝
1) №1 հրշեջ-փրկարարական ջոկատ,
2) №2 հրշեջ-փրկարարական ջոկատ,
3) №3 հրշեջ-փրկարարական ջոկատ,
4) №4 հրշեջ-փրկարարական ջոկատ,
5) №5 հրշեջ-փրկարարական ջոկատ,
6) №6 հրշեջ-փրկարարական ջոկատ,
7) №7 հրշեջ-փրկարարական ջոկատ,
8) №8 հրշեջ-փրկարարական ջոկատ,
9) №9 հրշեջ-փրկարարական ջոկատ,
10) №10 հրշեջ-փրկարարական ջոկատ,
11) №11 հրշեջ-փրկարարական ջոկատ,
12) №12 հրշեջ-փրկարարական ջոկատ,
13) «Նաիրիտ գործարան» ՓԲԸ հրշեջ-փրկարարական ջոկատ:
2. Արագածոտնի մարզային փրկարարական վարչության՝
1) Աշտարակի հրշեջ-փրկարարական ջոկատ,
2) Ապարանի հրշեջ-փրկարարական ջոկատ,
3) Արագածի հրշեջ-փրկարարական ջոկատ,
4) Թալինի հրշեջ-փրկարարական ջոկատ:
3. Արարատի մարզային փրկարարական վարչության՝

1) Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Արարատի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Մասիսի հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Վեդու հրշեջ-փրկարարական ջոկատ:

4. Արմավիրի մարզային փրկարարական վարչության՝

1) Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Բաղրամյանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Վաղարշապատի հրշեջ-փրկարարական ջոկատ:

5. Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության՝

1) հատուկ ջրափրկարարական ջոկատ,

2) Գավառի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Սևանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Մարտունու հրշեջ-փրկարարական ջոկատ,

5) Վարդենիսի հրշեջ-փրկարարական ջոկատ,

6) Ճամբարակի հրշեջ-փրկարարական ջոկատ:

6. Լոռու մարզային փրկարարական վարչության՝

1) Վանաձորի №1 հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Վանաձորի №2 հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Գուգարքի հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Թումանյանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

5) Թումանյանի հրշեջ-փրկարարական ջոկատի Օձունի հրշեջ-փրկարարական հենակետ,

6) Ստեփանավանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

7) Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատ,

8) Տաշիրի հրշեջ-փրկարարական ջոկատ:

7. Կոտայքի մարզային փրկարարական վարչության՝

1) «Հրազդան ՋԷԿ»-ի հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Հրազդանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Աբովյանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Եղվարդի հրշեջ-փրկարարական ջոկատ,

5) Զարենցավանի հրշեջ-փրկարարական ջոկատ:

8. Շիրակի մարզային փրկարարական վարչության՝

1) Գյումրու №1 հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Գյումրու №2 հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Արթիկի հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Ամասիայի հրշեջ-փրկարարական ջոկատ,

5) Անիի հրշեջ-փրկարարական ջոկատ,

6) Աշոցքի հրշեջ-փրկարարական ջոկատ,

7) Ախուրյանի հրշեջ-փրկարարական ջոկատ:

9. Սյունիքի մարզային փրկարարական վարչության՝

1) Կապանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Մեղրու հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Մեղրու հրշեջ-փրկարարական ջոկատի Ագարակի հրշեջ-փրկարարական հենակետ,

5) Սիսիանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

6) Քաջարանի հրշեջ-փրկարարական ջոկատ:

10. Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության՝

1) Եղեգնաձորի հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Ջերմուկի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Վայքի հրշեջ-փրկարարական ջոկատ:

11. Տավուշի մարզային փրկարարական վարչության՝

1) Իջևանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

2) Դիլիջանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

3) Նոյեմբերյանի հրշեջ-փրկարարական ջոկատ,

4) Տաուշի հրշեջ-փրկարարական ջոկատ:

12. Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ հերթափոխ:

13. Փրկարարական ուժերի վարչության՝

1) հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի՝

ա. №1 փրկարարական ջոկատ,

բ. №2 փրկարարական ջոկատ,

գ. №3 փրկարարական ջոկատ,

դ. №4 փրկարարական ջոկատ,

2) «ՀԱԷԿ» պահպանության հատուկ հրշեջ ջոկատ:

14. Քաղաքացիական պաշտպանության վարչության՝

1) քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի՝

ա. հրշեջ-փրկարարական պարետային ջոկատ,

բ. հրշեջ-փրկարարական ինժեներական ջոկատ,

գ. Նոյեմբերյանի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական ջոկատի՝

- Ոսկեվանի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Սարիգյուղի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Բերդավանի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Կոթի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Դովեղի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

դ. Տաուշի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական ջոկատի,

- Ազատամուտի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Չինարիի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Ներքին Կարմիր աղբյուրի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Այգեպարի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Մովսեսի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Պառավաքարի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ,

- Չորաթանի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խումբ:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի
2024 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 5539-Ա հրամանի

# ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) օպերատիվ հերթապահության մեջ ներգրավված ստորաբաժանումների գործառույթները:

## 2. ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

2. ՀՀ ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) օպերատիվ հերթափոխն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) սահմանված պարբերականությամբ և ժամկետներում կապ է հաստատում մշտադիտարկում իրականացնող ՀՀ պետական մարմիններում գործող ծառայությունների հետ՝ ըստ առնչության ձեռք բերելով տվյալներ և տեղեկատվություն հանրապետության տարածքում օպերատիվ իրավիճակի վերաբերյալ,

2) իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման գործում, ապահովում է դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը,

3) տիրապետում է մշտադիտարկման արդյունքներին՝ համակարգելով դրանք թվային քարտեզագրական համակարգում, ՃԿԱԿ-ի շտեմարաններում,

4) արտակարգ իրավիճակների առաջացման, առաջացման սպառնալիքի, կանխման և կանխարգելման, բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է ՀՀ ՆԳՆ և ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումների ղեկավարության, պետական մարմինների ղեկավարների, ՃԿԱԿ-ում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների ու բնակչության՝ ժամանակին ազդարարումն ու իրազեկումը,

5) ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման դեպքում սահմանված կարգով կազմակերպում է իրավասության սահմաններում՝ ՀՀ ՆԳՆ, այլ նախարարությունների և գերատեսչությունների ուժերի արձագանքումն ու միջոցների ներգրավումը,

6) արտակարգ իրավիճակների առաջացման, առաջացման սպառնալիքի դեպքում ապահովում է միջազգային պայմանագրերի շրջանակներում համապատասխան կազմակերպությունների իրազեկումը,

7) արտակարգ իրավիճակներում համագործակցում է ՃԿԱԿ-ում պետական կառավարման համակարգի մարմինների ներկայացուցիչների հետ՝ ապահովելով պետական կառավարման համակարգի շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների միջև ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին փոխանակումը՝ ուժերի և միջոցների անհրաժեշտ ծավալով ներգրավման, տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման, ստեղծված իրավիճակի տիրապետման, բնակչության իրազեկման, ազդարարման ու նշված գործընթացների ապահովմանն ուղղված որոշումների կայացման և իրականացման հարցերով,

8) սահմանված կարգով ընդունում և գրանցում է բնակչությունից, ծառայություններից, կազմակերպություններից ստացվող արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգերն ու տեղեկատվությունը,

9) ձեռք է բերում անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն, տվյալներ ստեղծված իրավիճակը գնահատելու և որոշում կայացնելու համար, ընդունում է որոշում և սահմանված կարգով կազմակերպում ստեղծված իրավիճակին համարժեք արձագանքում,

10) ՃԿԱԿ-ում գրանցված տեղեկատվությունն ու տվյալները սահմանված կարգով փոխանցում է շահագրգիռ ծառայություններին, ստորաբաժանումներին և պաշտոնատար անձանց,

11) հետևում է ուժերի արձագանքման ընթացքին և տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն՝ արձագանքումն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ,

12) ահազանգերի սպասարկման, արձագանքման, ազդարարման և իրազեկման գործընթացները սահմանված կարգով իրականացնելու համար նպատակային կիրառում է տեղեկատվական շտեմարանները, ծրագրային փաթեթները, կապի միջոցները, սարքերն ու սարքավորումները,

13) իր իրավասության սահմաններում ահազանգողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի վերաբերյալ,

14) սահմանված կարգով ձեռք է բերում տեղեկատվություն, տվյալներ ՀՀ ՆԳՆ ՓԾ հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների քանակի, մարտունակության և գտնվելու վայրի վերաբերյալ:

3. ՀՀ ՆԳՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության (այսուհետ՝ ՓՈՒՎ) հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական ջոկատներն իրականացնում են հետևյալ գործառույթները՝

1) արտակարգ պատահարների, դեպքերի, արտակարգ իրավիճակների ժամանակ իրականացնում է փրկարարական, ջրափրկարարական, լեռնափրկարարական, հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքներ.

2) աղետի գոտում իրականացնում է ընդհանուր և մասնագիտացված հետախուզություն, ինչպես նաև տուժածների և նյութական արժեքների տարահանում.

3) տուժածներին ցուցաբերում է առաջին օգնություն.

4) իրականացնում է փլուզումների մաքրման աշխատանքներ.

5) մասնակցում է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին.

6) ընդունում է արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ հաղորդագրություններն ու արձագանքում դրանց.

7) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է կենտրոնին հանձնված պետական գույքը.

8) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ գործառույթներ:

4. ՀՀ ՆԳՆ ՓԾ հրշեջ-փրկարարական ջոկատներն իրականացնում են հետևյալ գործառույթները՝

1) սպասարկման տարածքում իրականացնում է հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

2) սահմանված կարգով մասնակցում է սպասարկման տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

3) դեպքի վայրում իրականացնում է տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.

4) համագործակցելով այլ ծառայությունների հետ իրականացնում է անվտանգության ապահովում իր սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխման ժամանակ.

5) իրականացնում է իր սպասարկման տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառում.

6) իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավում է տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային և այլ անհրաժեշտ տեխնիկան.

7) կազմակերպում է խոցման օջախում հետախուզության իրականացումը.

8) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով ձեռք է բերում հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

9) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.

10) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ գործառույթներ:

5. ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ «ՀԱԷԿ» պահպանության հատուկ հրշեջ ջոկատն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) արտակարգ իրավիճակների ժամանակ իրականացնում է հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքներ.

2) հրդեհի ծագման դեպքում կազմակերպում և ղեկավարում է հրդեհաշիջման աշխատանքները.

3) պարբերաբար ուսումնասիրում է օբյեկտում առկա հրդեհաշիջման սկզբնական միջոցների անհրաժեշտ քանակությունը և հակահրդեհային ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակը.

4) հրդեհային անվտանգության ապահովման նպատակով փոխհամագործակցում է օբյեկտի ղեկավարության, անվտանգության բաժնի և մյուս շահագրգիռ ծառայությունների հետ.

5) օբյեկտի ինժեներական անձնակազմի հետ համատեղ իրականացնում է օբյեկտի հրդեհային անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, կազմակերպում աշխատակիցների հակահրդեհային հրահանգավորում.

6) պարբերաբար ուսումնասիրում է օբյեկտի համապատասխանությունը հրդեհային անվտանգության նորմերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ցուցաբերում է մեթոդական օգնություն բացահայտված խախտումների վերացման հարցերում.

7) արտադրամասերի, տեղամասերի, սարքավորումների, շինարարության, վերանորոգման և կրակային աշխատանքների կատարման ընթացքում ապահովում է հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման գործընթացը.

8) կազմակերպում է օբյեկտի հրդեհային անվտանգության վերաբերյալ ղեկավար մարմինների որոշումների, կարգադրությունների ու ցուցումների իրականացմանն ուղղված աշխատանքները.

9) օբյեկտի ղեկավարության քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ հակահրդեհային ջրամատակարարման, կապի միջոցների, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերի ու սարքավորումների վերազինման վերաբերյալ.

10) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ջոկատին հանձնված պետական գույքը.

11) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար

ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ գործառույթներ:

6. ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հատուկ ջրափրկարարական ջոկատը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է փրկարարական, ջրափրկարարական, որոնողափրկարարական աշխատանքներ.

2) դեպքի վայրում տուժածներին ցուցաբերում է առաջին օգնություն.

3) սահմանված կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին.

4) իր իրավասության սահմաններում պահպանում և օգտագործում է ջոկատին հանձնված պետական գույքը.

5) արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնում է այլ գործառույթներ:

7. ՀՀ ՆԳՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնն (այսուհետ՝ Կենտրոն) իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հրդեհաշիջման միջոցառումների և փրկարարական աշխատանքների իրականացում.

2) վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում.

3) Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հրշեջ-փրկարարական և ինժեներական ջոկատի «Ա», «Բ» խմբերի փրկարարական ծառայողները իրականացնում են շուրջօրյա հերթափոխային ծառայություն և ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնից ստանում կանչեր:

Հրշեջ-փրկարարական և ինժեներական ջոկատի «Ա», «Բ» խմբերի փրկարարական ծառայողները արձագանքում են ստացված կանչերին, իրականացնում են պայթյունավտանգ առարկաների (չպայթած զինամթերքի) նույնականացում և անհրաժեշտության դեպքում իրականցնում են պայթյունավտանգ առարկայի տեղափոխում և ոչնչացում՝ պայթեցման եղանակով.

4) Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հրշեջ-փրկարարական և ինժեներական ջոկատի հորատման խումբը իրականացնում է հորատման աշխատանքներ (գրունտային ջրերի հեռացում).

5) ավերված, խարխլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, դուրս բերման և տեղափոխման կազմակերպում ու իրականացում.

6) պարեկապահակային ծառայության կազմակերպում ու իրականացում.

7) ՀՀ ԶՈՒ զորամասերի հետ համատեղ մասնակցություն հակառակորդի կողմից ներթափանցված հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասազերծման գործողություններին.

8) բնակչության տարահանման միջոցառումներին աջակցում.

9) մասնակցություն Կենտրոնի պատրաստականության բերման պլանի մշակմանը.

10) Կենտրոնի հատուկ օբյեկտների պահպանության ստորաբաժանումների և ՀՀ ԶՈՒ զորամասերի միջև փոխգործողության պլանների մշակում.

11)Կենտրոնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրանց կատարման ընթացքի մասին հաշվետվությունների ու վերլուծությունների մշակում:

8. ՀՀ ՆԳՆ ՓԾ բժշկական ապահովման վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքներում ներգրավված անձանց բժշկական օգնության ցուցաբերումը.

2) Արտակարգ իրավիճակներում տուժած բնակչության առաջին օգնության ցուցաբերումը և տարհանումը.

3) 911 հեռախոսահամարով բնակչությանը բժշկական խորհրդատվության՝ առաջին օգնության մակարդակով, տրամադրումը.

4) արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին ընդգրկված անձնակազմի բժշկական օգնության ու սպասարկման ցուցաբերում: